600.0083.03.12.03

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 դեկտեմբերի 2003 թվականի №83Ա
քաղ. Երևան

«ՀԱՅԳԱԶԱՐԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ №0050, №0051 ԵՎ №0055 ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետը և 8-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովը **որոշում է.**

1. Դադարեցնել «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ջերմային էներգիայի արտադրության №0050, փոխադրման №0051 և բաշխման №0055 լիցենզիաների գործողությունները:

2. Ուժը կորցրած ճանաչել՝

ա) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2000 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը ջերմային էներգիայի արտադրության և տեղափոխման գործունեությունների լիցենզիաներ տրամադրելու մասին» №28 որոշումը,

բ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 2001 թվականի փետրվարի 12-ի «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը ջերմային էներգիայի բաշխման գործունեության լիցենզիա տրամադրելու մասին» №5 որոշումը,

գ) Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Հայգազարդ» փակ բաժնետիրական ընկերության №0050,

№0051 և №0055 գործունեության լիցենզիաների գործողության ժամկետները երկարաձգելու մասին» №77Ա որոշումը,

դ) Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի հոկտեմբերի 24-ի «Ջերմային էներգիայի սակագնի սահմանման մասին» №73Ա որոշման 1-ին կետի ա) ենթակետի աղյուսակի 4-րդ կետը և բ) ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲՆԱԿԱՆ ՄԵՆԱՇՆՈՐՀՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ**

ք. Երևան
3 դեկտեմբերի 2003թ.
ժամը 17^{00}